**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

08-ը դեկտեմբերի 2022թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան /ԳԱՊ/,
ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պահեստների, խողովակաշարերի և տեխնիկական միջոցների պլանավորման և շահագործման բաժնի պետ, գնդապետ Ո. Պոչինսկի,
ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պահեստների, խողովակաշարերի և տեխնիկական միջոցների պլանավորման և շահագործման բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Հ. Քննակսզյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Վարդանյան:
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Գ. Տերյան:

***« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Գ. Տերյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Գ. Տերյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/4» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Սվետան» ՍՊԸ |
| 2 | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ |
| 3 | «ՋԻ-ԷՍ- ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ |
| 4 | «Լեյկո» ՍՊԸ |
| 5 | «ՄԱԺԷՎ» ՍՊԸ |
| 6 | «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ |
| 7 | «ԺՈԶԵՖ ԿՈՄԵՐՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ |
| 8 | Ա/Ձ Հասմիկ Օհանյան |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Գ. Տերյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ և «Սվետան» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի Հավելված N 1-ի առաջին կետում նշված է մասնակցության իրավունքի պահանջներին բավարարման վերաբերյալ մասնակցի հավաստումը, այնինչ վերոնշյալ ընթացակարգի հրավերի Հավելված N 1-ի առաջին կետում նշվում է մասնակցի և իրեն փոխկապակցված անձանց մասնակցության իրավունքի պահանջներին բավարարման վերաբերյալ հավաստումը: Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 08.12.2022թ. ծանուցել վերոնշյալ մասնակիցներին սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները և նիստը շարունակվել է: «ԺՈԶԵՖ ԿՈՄԵՐՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «ՋԻ-ԷՍ-ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ կողմից ներկայացրած հայտերի Հավելված N 2-ում գնային առաջարկներում ընթացակարգի ծածկագրերը սխալ են նշված, իսկ վերջինս նաև

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ուստի այդ մասնակիցների հայտերը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվեցին:

Ա/Ձ Համիկ Օհանյանի հայտի Հավելված N 1.1-ի 19-րդ և 20-րդ չափաբաժինների «ջերմաստիճանի թույլատրելի շեղումը°C» և «սահմանված ջերմաստիճանի ճշգրտությունը°C» ցուցանիշները ներկայացված է ±-ով, այնինչ հրավերով սահմանված է միայն +ով, որը քննարկման և ճշտման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից համարվեց ընդունելի և հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Տերյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 6 մասնակից.

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակը | Նախահաշվ. գումարը * | Ընտրված կազմակերպության | | | Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումը | գինը | | անվանումները | գինը | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1 | Էլեկտրոդներ / Էլեկտրոդ՝ արգոնի/ | կգ | 1 | | | | | | | |
| 2 | Մակարդակի չափման սարքեր /Չափիչ մետր/ | հատ | 30 | | | | | | | |
| 3 | Լաբորատոր ապակյա արտադրանք /Վիսկոզիմետր d>3մմ/ | հատ | 10 | | | | | | | |
| 4 | Լաբորատոր ապակյա արտադրանք /ՊՏՖ ԼԱԲ-12 սարքի փորձարկման պիպետկա/ | հատ | 4 | | «ՄԱԺԷԿ» ՍՊԸ | 400000 | 480000 | | | |
| 5 | Լաբորատոր ապակյա արտադրանք /ԱՌՆ ԼԱԲ-11 սարքի Էնգլերի կոլբա 125մ/ | հատ | 3 | | «ՄԱԺԷԿ» ՍՊԸ | 225000 | 270000 | | | |
| 6 | Լաբորատոր ապակյա արտադրանք /ԱՌՆ ԼԱԲ-11 սարքի ընդունիչ գլան՝ տակդիրով/ | հատ | 5 | | «ՄԱԺԷԿ» ՍՊԸ | 350000 | 420000 | | | |
| 7 | Ջերմաչափեր /ԱՌՆ ԼԱԲ-11 սարքի ջերմաստիչ/ | հատ | 1 | | «ՄԱԺԷԿ» ՍՊԸ | 200000 | 240000 | | | |
| 8 | Լաբորատոր ապակյա արտադրանք /Լինտել Կրիստալ 20 սարքի փորձանոթ նեղ թևով (պրոբիրկա Ա)/ | հատ | 3 | | «ՄԱԺԷԿ» ՍՊԸ | 450000 | 540000 | | | |
| 9 | Լաբորատոր ապակյա արտադրանք /Լինտել Կրիստալ 20 սարքի փորձանոթ կրկնակի պատերով (պրոբիրկա Բ)/ | հատ | 3 | | «ՄԱԺԷԿ» ՍՊԸ | 450000 | 540000 | | | |
| 10 | Լաբորատոր ապակյա արտադրանք /Էնգլերի կոլբա 125մմ՝ թորման համար/ | հատ | 30 | | «ՄԱԺԷԿ» ՍՊԸ | 2250000 | 2700000 | | | |
| 11 | Կետոն և խիտոն ֆունկցիոնալ խմբերի միացություններ /Ացետոն/ | կգ | 200 | | | | | | | |
| 12 | Գլիցերին /Գլիցերին/ | կգ | 200 | | «Լեյկո» ՍՊԸ | 316650 | 379980 | | | |
| 13 | Եթերներ /Նավթային եթեր/ | լիտր | 5 | | | | | | | |
| 14 | Զանազան օրգանական քիմիական նյութեր /Հեպտան/ | գրամ | 10 | | | | | | | |
| 15 | Զանազան օրգանական քիմիական նյութեր /Իզոօկտան/ | գրամ | 5 | | | | | | | |
| 16 | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ /Բենզինի փորձարկման համար ստանդարտ նյութեր/ | տուփ կազմ | 1 | | | | | | | |
| 17 | Կշեռքներ /Կշեռք/ | հատ | 10 | | «Ավետան» ՍՊԸ | 543000 | | | | |
| 18 | Մեխանիկական ամբարձիչներ /Տակառաբարձիչ/ | հատ | 10 | | | | | | | |
| 19 | Քիմիական լաբորատորիայում կիրառվող սարքեր /Կինեմատիկ մածուցիկությունը որոշող սարք/ | հատ | 3 | | Ա/Ձ Համիկ Օհանյան | 4500000 | 5400000 | «ՄԱԺԷԿ» ՍՊԸ<br>«ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ | 5250000<br>6940000 | 6300000<br>8328000 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 20 | Քիմիական լաբորատորիայում կիրառվող սարքեր /Կինեմատիկ մածուցիկությունը որոշող սարք/ | հատ | 2 | | Ա/Ձ Համիկ Օհանյան | 4500000 | 5400000 | «ՄԱԺԵՎ» ՍՊԸ<br>«ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ | 5300000<br>6840000 | 6360000<br>8208000 |
| 21 | Քիմիական լաբորատորիայում կիրառվող սարքեր /Վառելիքի ֆրակցոն կազմի որոշման սարք/ | հատ | 2 | | «ՄԱԺԵՎ» ՍՊԸ | 2750000 | 3300000 | | | |
| 22 | Քիմիական լաբորատորիայում կիրառվող սարքեր /Փակ տիգելում բռնկման ջերմաստիճանի որոշման սարք/ | հատ | 1 | | Ա/Ձ Համիկ Օհանյան | 5600000 | 6720000 | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ | 5625000 | 6750000 |
| 23 | Քիմիական լաբորատորիայում կիրառվող սարքեր /Նավթամթերքի ֆրակցիոն կազմը որոշելու սարք/ | հատ | 1 | | | | | Ա/Ձ Համիկ Օհանյան<br>«Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ<br>«ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ | 8000000<br>8000000<br>10900000 | 9600000<br>9600000<br>13080000 |
| 24 | Լաբորատորիայի սեղաններ /Լվացման սեղան մետաղական հիմքով՝ 150x85x60սմ/ | հատ | 1 | | | | | | | |
| 25 | Լաբորատորիայի սեղաններ /Սեղան մետաղական հիմքով՝ գազքրոմոտոգրաֆի համար 120x85x80սմ/ | հատ | 1 | | | | | | | |
| 26 | Լաբորատորիայի սեղաններ /Սեղան քիմիապես կայուն մակերեսներով, մետաղական հիմքով, էլեկտրոֆիկացված 120x85x60սմ/ | հատ | 6 | | | | | | | |
| 27 | Ռեզերվուարներ /Շարժական լցավորման կայան-ռեզերվուար (2x10)/ | հատ | 6 | | | | | | | |
| 28 | Կափույրներ և խողովակներ /Շնչառական կափույր ՌԿԴ-1/ | հատ | 50 | | | | | | | |
| 29 | Կափույրներ և խողովակներ /Շնչառական կափույր ՍՄԴԿ-200/ | հատ | 25 | | | | | | | |
| 30 | Հանկագազներ /Հակագազ ճկափող ՊՇ-1Ս (պայուսակով)/ | հատ | 150 | | | | | | | |
| 31 | Վառելիքի պոմպեր /Տարաներից (տակառներից) յուղերի վերամղման ձեռքի պոմպ/ | հատ | 150 | | | | | | | |
| 32 | Քիմիական լաբորատորիայում կիրառվող սարքեր /Ավտոմատ տիտրատոր՝ ըստ Կարլ Ֆիշերի/ | հատ | 1 | | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ | 6000000 | 7200000 | | | |

***Գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն**

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

**3.3 Ի գիտություն բանակցության նիստին բացակայում է ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պահեստների, խողովակաշարերի և տեխնիկական միջոցների պլանավորման և շահագործման բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Հ. Քենակզյանը**: Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/4» ծածկագրով ընթացակարգի 23-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների նվազագույն գնային առաջարկները հավասար են, գնահատող հանձնաժողովի կողմից հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, գների նվազեցման նպատակով 13.12.2022թ. բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին ծանուցվել է 16.12.2022թ բանակցությունների վարման վերաբերյալ: Սահմանված ժամկետում բանակցություններին ներկայացել են «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ տնօրենը և Ա/Ձ Համիկ Օհանյանի լիազորված անձը և նվազեցրել են ներկայացրած գնային առաջարկները սահմանելով համապատասխանաբար՝ 7 194 000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն և 7 200 000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին, 2-րդ, 3-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ 30-րդ և 31-րդ չափաբաժինների մասով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/4» ծածկագրով ընթացակարգը չի կայացել համաձայն Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (ոչ մի հայտ չի ներկայացվել):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների որոշման մասին.

---

(Գ. Տերյան)

4.1 20.12.2022թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը **«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/4»** ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 21-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «ՄԱԺԵՎ» ՍՊԸ, 12-րդ չափաբաժնով՝ «Լեյկո» ՍՊԸ, 17-րդ չափաբաժնով՝ «Սվետան» ՍՊԸ, 19-րդ, 20-րդ, 22-րդ չափաբաժիններով՝ Ա/Ձ Համիկ Օհանյանը, 23-րդ և 32-րդ չափաբաժիններով՝ «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ և վերջիններիս, անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

4.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել « ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ**

(Գ. Տերյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**Գնահատող** Հ. Մելիքյան

**Գնահատող** Ռ. Պոչինսկի

**Գնահատող** Հ. Քանաքզյան

**Գնահատող** Ա. Վարդանյան

**Գնումները համակարգող՝** Գ. Տերյան